

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Կ. ՊՈԼՍՈՆՈՐԵՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ԱՆԳՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

**ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍԻ ԾԱՌԱՅ ՄԵՍՐՈՊ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԵ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐ
ՇՆՈՐՀՕՔ ԱՄԵՆԱՍՐԲՈՅ ՀՈԳԻՈՅՆ ԵՒ
ԸՆՏՐՈՒԹԵԱՄԵ ԱԶԳԻՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ. ԵՒ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՅ
ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՍ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ**

Օրհնեալ հաւատացելոց տիրախնամ Պատրիարքական վիճակիս, գերաշնորհ եւ հոգեշնորհ վեղարաւոր Միաբանից, բարեխնամ Քարոզչաց, բարեկարգ Երիցանց, բարեշնորհ Սարկաւագաց, բարեկրօն Դպրաց, եւ բովանդակ եկեղեցական պաշտօնէութեանց, նոյն եւ պատուարժան Թաղային հորհրդոց եւ խնամակալութեանց եւ հոգաբարձութեանց եւ Յանձնաժողովոց, կրթական Մշակաց, յարգարժան Ստաւորականաց եւ Արուեստագիտաց, Հայ Մամուլ երախտաշատ սպասաւորաց, եւ բովանդակ բարեպաշտօն ժողովրդականաց, արանց եւ կանանց, մանկանց եւ երիտասարդաց, կատարելոց եւ ծերոց, հարազատաց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյս, Քրիստոսաւանդ ողջոյն եւ սէր հայրական, եւ օրհնածայն ճաղթանք երկնային առատապարգեւ շնորհաց ի Հօրէն Ամենակալէ եւ ի Միածնէ Որդւոյն եւ ի Սրբոյ Հոգւոյն, ամէն:

Մեր ընտրութենէն եւ գահակալութենէն լման տաս ամիս յետոյ, Սուրբ Կոյս Աստուածածնի Վերափոխման եւ Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյս ամուսն տօնախմբութեան բարեբաստիկ առիթով կը հրապարակենք սոյն Պատրիարքական Անդրանիկ Կոնդակը որպէս սրտազեղ հայրական խօսք, յօգուտ եւ ի

շինութիւն մերազն հաւատացեալներուն: Տիրամօր կենդանի բարեխօսութիւնները մերազն հաւատացնէ իր այցելութեան, նորոգէ եւ հաստատէ մեր սրտերը ուղղափառ հաւատքի եւ առաքինասէր կեանքի մէջ, լուսաւորէ մեր մտքերը եւ անսայթաջ առաջնորդէ մեզ ամենքս յաւիտենական կեանքի:

Գոհութիւն եւ փառք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Սուրբ Թաղէս եւ Սուրբ Բարթողոմէոս առաքեալներու քարոզչութեամբ, բազում վկաներու նահատակութեամբ, մեր բազմերախտ հայրապետին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի սիրագործութեամբ առաջնորդեց մեզ ի խաւարէ ի լոյս եւ մեր բազում հայրերու եւ սուրբերու վկայութեամբ աստուածօրհտութեան լոյսը դրաւ մեր սրտերում մէջ: Դայ ժողովուրդը իր երկհազարամեայ քրիստոնէական կեանքը արգասաւորեց մեծանուն գործերով եւ հոգեւոր մշակոյթի զարմանալի արժէքներով, մինչեւ իսկ երբեմն նուիրագործելով զանոնք մարտիրոսներու արեամբ:

Ահաւասիկ մեր հերթին այսօր կանգնած ենք կարենորագոյն երեք հաւգրուաններու սեմին, մենայն Դայոց Կաթողիկոսի ընտրութիւնը յառաջիկայ Դոկտեմբերի վերջաւորութեան, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան երկհազարամեակի յոբելեանը եւ Առաքելական Սուրբ Եկեղեցիի Դայոց կողմէ պաշտօնական ճանաչում գտնելուն 1700-ամեակը: Պատմական սոյն քննութիւնները առիթ պիտի ընծայեն մեզի վերահաստատելու մեր ինքնութիւնը եւ նորոգելու մեր Քրիստոնէական կերտութեանը: Եկէք, ներհայեցողութեամբ ու աղօթքով եւ երկնային շնորհաց հոգեզարթ ակնկալութեամբ մերժենանք սոյն երեք իրադարձութիւններուն, որպէսզի անոնք յիրաւի դառնան առիթներ անձնական եւ հաւաքական ապաշխարութեան եւ պատճառ՝ մեր մկրտութեան ուխտի հզօրագոյն վերականգնման:

Որպէս հոգեւոր վերադէտ, առաջնակարգ պարտականութիւնն ունինք Սուրբ Աթոռոյս միաբանակից իւրաքանչիւր կարգի եւ աստիճանի բոլոր հոգեւոր հայրերուն, եղբայրներուն եւ քոյրերուն, յիշեցնելու իրենց ձեռնադրութեան ուխտը, զոր կատարեցին առաջի Աստուծոյ՝ վկայութեամբ մեր ժողովրդին: Դնազանդութիւն՝ աստուածային օրէնքներու, եկեղեցական կարգկանոններու եւ մեծաւորներու պատուէրներուն, կամաւոր աղքատութիւն ընչաքաղցութեան եւ արծաթսիրութեան մերժման ամենամախնական իմաստով եւ ողջախոհութիւն՝ մաքրակրօն, սրբասէր եւ ժուժկալ կենցաղի առումով, ե՛ն եւ կը մնան անտարանական իրամայականներ բոլոր քրիստոսասէր հաւատացեալներուն՝ եւ որչա՛ի անելի եւս հոգեւորականներուս համար: Պաշտամունքային ժամերու կանոնաւոր հետեւողութիւն եւ կատարում մինչեւ իսկ երբ առանձինն եւ մենակ ենք, Աստուածաշունչ Մատեանի եւ սուրբ հայրերու սրբատառ գրականութեան ընթերցասիրութիւն, հոգեւոր խոկմունքի եւ մտահայեցողութեան պահերու յաճախադիպութիւն կը սատարեն, որպէսզի մնանք անկեղծ, նուիրեալ եւ ծառայասէր սպասաւորութեանը մէջ մեր մարտիրոս Եկեղեցւոյ, որ հոգեւոր մարմինն է մեր երկնաւոր Քահանայապե-

տիմ: Մեր ճշմարիտ, բարի և քաջ Հովուապետը համբերեց խաչի չարչարանքներուն և մահուան՝ մեր մեղքերու քաւութեան և թողութեան համար, թաղուեցաւ և երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներէն, համբարձաւ երկինք և այժմ կը շարունակէ քահանայազործել մեր փրկութեան համար: Իր ցայժմ կատարածներուն խորագգած գիտակցութեամբ և իր միւսամգամ Գալստեան կատարելիքներուն յուսապարար սպասումով տոգորեալ՝ պիտի շարունակենք մեր հոգեւոր ծառայութիւնը ի շինութիւն մեր հաւատացեալ ժողովրդին և ի փառս Բարձրեալն Աստուծոյ: Սիրելիներ, Տէր Աստուած հոգեւոր քաղցրութեան, եղբայրսիրութեան և ուղղափառ հաւատքի մէջ պահէ և օրհնութեամբ ամրացնէ ձեզ, թող ձեր մտքերն ու զգայարանները, ձեր սրտերն ու խորհուրդները, ձեր խօսքն ու գործքը ծաղկազարդէ շնորհափայլութեամբ, հեղով ձեր վրայ եօթնազան պայծառութեամբ լուսաճառագ շնորհները իր Սուրբ Հոգիին: Հոգեզուարճ հրճումնքով զմայլեցէք, խայտալից բերկրանքով ցնծացէք, անսպառ ուրախութիւնը ճաշակեցէք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ քաղցրահամ և ուղղափառ ժառանգութեան, որուն ցկեանս ուխտաւորները լինելու պատուին ամարժանաբար կոչուած ենք բոլորս ալ: Իսկ մեր հաւատացեալներուն հայրաքար կը յորդորենք զգոյշ լինիլ հոգեւոր պաշտօնեաներու և առաջնորդներու ընտրութեան մէջ, և որդիական ակնածանքով և մեծարանքով վերաբերուիլ անոնց հետ, ջանք չխնայել և երկիւղածութեամբ պաղատիլ Աստուծոյ, որ հետզհետէ բազմաման արժանաւոր հոգեւոր մշակները, ինչպէս որ կը պատուիրէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասելով. «Աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր» /Մատթ. Թ 38/:

Դպրաց դասեր, եղէք ոչ միայն երգչախումբեր, այլ նաեւ եղբայրական համախմբումներ՝ աշակերտելու հոգեւոր դպրութեան, կանոնական և դաւանական գրականութեան, ինչպէս երբեմնի առաքելները նստեր էին Գալիլիացի Մեծ Վարդապետի ծունկին, այնպէս և դուք հաւաքուեցէք ձեր հովիւներուն շուրջ, ճաշակեցէք Աստուծոյ խօսքին քաղցրութիւնը, մեր հայրերու հոգեւոր աննման զանձները: Թափանցեցէ՛ք իմաստին և ձեր սրտերու ամենատաքուկ անկիւններուն տեղ բացէք այն հիւանալի երգերու և շարականներու մէն մի բառին զոր կ'եղանակէ ձեր շրթներով: Չեր հովիւներու աջակցութեամբ հոգ տարէք նորահաս սերունդին, զբաղեցէք մանուկ և պատանի դպիրներ հասցնելու կենսական առաքելութեամբ: Աշխատեցէ՛ք, որ ձեր այնքան սիրած հոգեւոր զանձները երգուին նաեւ ձեզմէ յետոյ: Լուսաւոր, շէն, պայծառ և հաւատացեալներու այցելութեան միշտ բաց պահեցէք մեր տաճարները, որոնց մէջ հոգ տանիլ անհրաժեշտ է, որպէսզի տիրէ աղօթքի, երկիւղի, խաղաղութեան, լրջութեան և սրբութեան մթնոլորտը: Եւ Ամենակարողն Աստուած, որ իր Որդիին՝ Քրիստոսի միջոցաւ լուսաւորեց աշխարհն ու ազատեց մեզ մեղքի անէծքէն և հոգեւոր մահէն, թող անսպառ պահէ ձեր ծայները, հաստատէ ձեր սրտերը իր երկիւղին մէջ, լուսաւորէ ձեզ իր իմաստութեան լուսով, որպէսզի ժամանէք անամց կեանքին, ուր պիտի երգակցիք զուարթունքներուն՝ յաւերժ սրբաբանութեամբ:

Ուսուցիչներ, նուազ կարիւր չէ ձեր դերը մեր ժողովուրդի ոգեկան շինութեան եւ կերպարոյթման, Հայ Զրիստոնեայ դիմագծի պահպանութեան, մեր ոսկեղնիկ լեզուի եւ մեսրոպեան սուրբ տառերու նոր սերունդներու փոխանցման, Հայ Մշակոյթի պահպանման եւ զարգացման անյետաձգելի պարտականութեանց ծիրներն ենք որոնց մէջ, ըստ Մեզի, ունիք եւ պարտաւոր էք առաքելութեանց ծիրներն ենք որոնց մէջ, ըստ Մեզի, ունիք եւ սրբազան պաշտօն է ձերինը, զոր ունենալու կենսական ներդրում: Կոչում եւ սրբազան պաշտօն է ձերինը, զոր միշտ մերժած ենք ընդունիլ լոկ որպէս եկամտաբեր ապրուստի միջոց: Այնքան անփոխարինելի է ձեր առաքելութիւնը, որ հոգեւոր սպասաւորներու նման, ցկեանս ուխտաւորները պիտի լինիք ազգային դպրութեան, երբեմն նեղութիւններու պիտի ստիպողաբար համբերէք նաեւ դուք, սակայն ձեր բարոյական վարժատրութիւնը վստահ եղէք, որ միշտ պիտի գերազանցէ ձեր կեանքի բոլոր օրերուն ընթացքին, յատկապէս երբ ականատես կ'ըլլաք, որ աշակերտներու նորանոր սերունդներ կը խօսին եւ կ'աղօթեն մեր լեզուով, կ'օգտագործեն մեր տառերը, կ'երգեն եւ կը պարեն մեր տոհմաշունչ մեղեդիներով: Հայկական դպրութեանց բազմերայիտ հիմնարկուներ Սուրբ Սահակ Հայրապետի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ Թարգմանիչ Սուրբ Վարդապետներու հոյլին արժանա-հայաց աղօթքներով եւ բարեխօսութեամբ, Տէր Աստուած թող զօրացնէ, ամրացնէ եւ հաստատէ ձեզ ուսուցչական ձեր կոչումին մէջ եւ թող տեսիլք շնորհէ ձեզի, որպէսզի տոկաք եւ համբերէք նեղութիւններու, բարձր պահէք ձեր ազնիւ եւ ներշնչող դիմագիծը դեռատի սերունդին առջեւ, որոնք ներաշխարհին մէջ այնքան խոր ազդեցութիւն կը թողու ձեր մէն մի խօսքն ու շարժումը:

Մեր եկեղեցւոյ եւ եկեղեցական համայնքներու վարչական զանազան մակարդակներուն վրայ, ընտրութեամբ կամ մշանակովի պաշտօնի կոչուած աշխարհականներուն ալ հայրաբար խրատներ պիտի ունենանք: Նախեստառք, սա յստակ լինի բոլորին. դուք կոչուած չէք աշխարհիկ եւ քաղաքական պաշտօնավարութեան, այլ առաւելաբար ընտրուած էք խնամածելու եւ զարգացնելու այն աւանդը, զոր մեր եկեղեցասէր եւ ազգամուկ նախնիք մեծագոյն գոհողութիւններով փոխանցած են մեզի: Բարեպաշտ հասարակութիւնը ընտրութեամբ կոչած է ձեզ վարչական պարտականութեան՝ ի՞նչ իսկ անունով դեկավարելու մեր Սուրբ եկեղեցւոյ եւ ամոր յարակից կրթական եւ մշակութային, առողջական եւ բարեսիրական հաստատութեանց տնտեսութիւնը եւ ապահովելու աշխարհավարական ներքին եւ արտաքին գործառնութեանց անխափան եւ ապահով ընթացքը: Մեր կրօնա-եկեղեցական համայնքային կեանքի տոյն ուրորտի ժրաջան եւ ազնիւ բոլոր մշակներուն կը փոխանցենք մեր հայրական օրհնութիւնը եւ զօրակցութիւնը: Գալով անոնց, որ կը շեղին եւ դուրս կու գան իրենց պարտականութիւններու ծիրէն եւ իրենց վստահուած վարչական հանգամանքը կը չարաշահին, հայրաբար կը հրաւիրենք ողջմտութեան եւ սթափութեան: Իսկ համայնքներու մէջ կեդրոնախոյս եւ անջատողական հոսանքներու աւերիչ եւ դաւադիր ճամբան քացողները, նուիրապետական իշխանութեան դէմ ճակատ յարդարողները լրջօրէն կը զգուշացնենք, որ եթէ չդառնան իրենց չար ճանապարհէն եւ չհայցեն ներո-

դամտութիւնը Սուրբ Եկեղեցւոյ, յաւետ պիտի գրկուին աստուածային օրհնութենէն եւ հոգիի խաղաղութենէն:

Բարձրօրէն կը գնահատենք Հայ գրի եւ գրքի համար աշխատանք տանողները, Հայ մամլոյ խմբագիրներն ու աշխատակիցները, հրատարակչատուներու եւ տպարաններու անձնակազմերը, որոնք տիւ ու գիշեր իրենց կարելին կ'ընեն Հայ գիրն ու արուեստը ապրեցնելու, մեր ժողովուրդը լուսաբանելու եւ այսպիսով կը դառնան համայնքային կեանքի աշխուժացման լծակ: Աւելորդ չենք նկատեր մեր մամլոյ խմբագիրներուն անգամ մը եւս յիշեցնելու Սեր երանաշնորհ նախորդներէն Տրապիզոնի Գարեգին Ա Պատրիարքի պատգամը. «Քննութիւնն ու քննադատութիւնը կը կորսնցնեն իրենց արժէքն ու իրաւունքը, ինչպէս նաեւ ազդեցութիւնն ի բարին եւ ի ճշմարիտը, երբ չեն ներշնչուած թափանցուած բուն իրողութիւններէն, այլ առաջնորդուած են երեւակայութիւններէ, կանխակալ կարծիքներէ, սեւեռամտածումներէ եւ մերթալ անխոստովանելի նկատումներէ: Ասոնք ոչ միայն չեն շիներ, այլ եւ կը քանդեն»: Արդարեւ ահաւոր է մամուլի պատասխանատուութիւնը: Սենք հայրաբար կ'օրհնենք մեր մամլոյ բոլոր այն աշխատակիցները, որոնք գրիչները կը սպասարկեն բարիին, գեղեցիկին, ճշմարտութեան եւ շինութեան:

Հետեւեալ պատուէրներն ունինք բոլորին: Յիշեցէք, որ ըստ Առաքեալի՝ տաճար էք Աստուծոյ եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ Սուրբ Աւագանի մկրտութեամբ, ուստի հեռու մնացէք մեղքերէ եւ հոգեկործան մոլութիւններէ եւ ձեր հոգիները զարդարեցէք առաքինութեան գործերով: Ինչպէս միշտ, նաեւ այսօր հաւատարմօրէն կատարեցէք ձեր քաղաքացիական բոլոր պարտականութիւնները, միաժամանակ գիտակից եղէք ձեր իրաւանց եւ արժանապատուութեան: Բժայխնդիր եղէք ընտանեկան յարկի սրբութեան, հեռու վանեցէք ձեզմէ մեր քրիստոնէական ինքնութեան եւ տոհմիկ նկարագրին անվայել եւ օտարոտի խորհուրդները եւ քերմօրէն պահպանեցէք այն օրհնութիւնը, զոր ստացաք Սուրբ Պսակի աստուածային խորհրդով: Ձեր զաւակները սնուցանեցէք Աստուծոյ երկիւղով, աղօթասիրութեամբ եւ ողորմածութեամբ. հետամուտ եղէք, որ ամոնք լինին պարկեշտ, եկեղեցանուէր եւ հայրենասէր: Իրարու նկատմամբ մնացէք սիրով եւ յարգալից: Աղքատներու, որբերու, հիւաղներու եւ տառապեալներու իրաւունքները անտես մի՛ առնէք, եղէք կարեկից եւ ողորմած, քանզի ոչ մէկ բան մեզ կրնայ աւելի աստուածանման դարձնել քան ողորմութեան գործերը: Արդարեւ գնահատելի է մեր ժողովուրդը, որ ամէն առիթով ջանադրաբար կը սատարէ համայնքային եւ բարեսիրական մեր բոլոր հաստատութիւններուն, շէն պահելով զանոնք ի փառս Աստուծոյ եւ ի վայելումն մերազն ժողովրդին:

Յաւարտ կոնդակիս, ակնածանցով եւ յարգանցով կը խոնարհինք մեր երանաշնորհ նախորդներու հոգեւոր ժառանգութեան, ի մասնաւորի Սեր հոգեւոր ծնողի՝ Ընդրիք Պատրիարքի սրբալոյս յիշատակին առջեւ: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ մեզ առաջնորդէ եւ զօրացնէ՝ արդիւնաւորելու եւ

մշակելու մեր տեսլականն լատահուած տիրախնամ վիճակը Հայաստանեայց Առաքելական Սուրբ եւ Ուղղափառ եկեղեցւոյ անխախտ միութեան մէջ: Եղբայրական ջերմագին ողջոյններ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Նախամեծար եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանակից բոլոր հայրերուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Առաքելագործ Հայրապետին եւ Միաբանութեան, Ս. Երուսաղէմի Ենորհազարդ Պատրիարքին եւ Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռի միաբանակից բոլոր հայրերուն, եւ իրենց վիճակներուն:

Ողջ լերուք ի խնամն Տեառն, «եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտենական ի փառսն Քրիստոսիւ Յիսուսի, որում փոքր մի եղերուք չարչարակիցք, Նա կազդուրեսցէ, կարողացուցէ, հաստաւիժն արասցէ զձեզ: Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն: (Ա. Պետրոս Ե. 10):

**ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ**

Տուաւ կոնդակս ի 14-ն Օգոստոսի,
յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽՈ
ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին
Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ
ընդ համարաւ Ա/1